



ԴԱՍ 7.3 Հանքային ռեսուրսներ (օգտակար հանածոներ)

1. Օգտակար հանածոների համաշխարհային սպառումն անշեղորեն աճում է: Մեր օրերում բնակչության մեկ շնչի հաշվով երկրի ընդերքից տարեկան արդյունահանվում է 28–30 տ զանազան հումք և վառելիք, շինանյութեր: Քանի որ հանքային ռեսուրսները սպառվող, չվերականգնվող են, այս հանգամանքը սրում է համաշխարհային տնտեսության ռեսուրսաապահովվածության հիմնախնդիրը:

2. Մեծ հետաքրքրություն են ներկայացնում *երկրաջերմային* (գեոթերմալ) էներգիայի համաշխարհային ռեսուրսները: Երկրաջերմային էներգիայի աղբյուրների առաջին տիպը ստորերկրյա ավազանների տաք ջրերը (երկրաջերմային աղբյուրները) կամ գոլորշին են, որոնք անմիջականորեն կարելի է արդյունահանել սովորական հորատանցումների շնորհիվ և օգտագործել: Ջերմային էներգիան փոխակերպվում է էլեկտրականի:

Երկրորդ տիպը տաք ապարների ջերմությունն է: Ջուր ներմղելով՝ կարելի է ստանալ շոգի և տաք ջուր:

3. Երկրագնդի վրա հանքային հարստությունների որոնումներն ընթացում են երկու գլխավոր ուղղություններով՝ «խորությամբ», որը բնորոշ է ԱՄՆ-ին և եվրոպական զարգացած երկրներին, և «լայնությամբ»՝ Ռուսաստանի ասիական մասին, Կանադային, Ավստրալիային, Բրազիլիային:

Հանքային ռեսուրսների տնտեսական գնահատումը (տես՝ բնական ռեսուրսների տնտեսական գնահատումը):